

Չի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւարեսցուք¹, զի ոչ առցուք զայլոց², եւ ի՞նչ կեցցուք այսչափ անչափ⁴ զաւրաց բազմութիւնք⁵: 15 Եւ թեպէտ բիւրաւոր բանիւք բարեաւք⁶ կամեր հաճել զմիտս Նոցա, ոչ ինչ կամէին⁷ ունզնդիր լինել այլ ասէին⁸ ցմիմեանս. Եկեալ այսպիսի բանիւք կամի ի քաջութենէ⁹ որսոյն¹⁰ կենաց մերոց խափանել զմեզ. իսկ եթէ սմա լուիցուք, եւ դարձցուք յաւրէնս քրիստոնէութեան, ի՞նչ¹¹ կեցցուք, զի ոչ յաւար¹² հեծցուք ըստ բնութեան¹³ աւրինաց սովորութեան մերոյ¹⁴: 16 Այլ, ասեն, այս խորհուրդ թագաւորին¹⁵ Հայոց Է. զսա յղեալ¹⁶ առ մեզ, զի այսու ուսմամբ¹⁷ խափանեսցէ զմեր¹⁸ արշաւանս ասպատակութեան հինի¹⁹ յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պակասեսցուք²⁰ ի միջոյ, եւ մեք ի Հայս արշաւեսցուք, եւ²¹ աւարաւ զմեր աշխարհս լցցուք²²:

17 Ապա շրջեցաւ թագաւորն, եւ լուաւ բանից զաւրաց իւրոց. եւ կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագոյ ձիոյն, եւ արծակեցին ընդ ծովեզրն դաշտին²³ հիւսիսական²⁴ ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնայ. եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս: 18 Եւ ապա բարձին զնա²⁵ որք ընդ Նմայն²⁶ երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն¹ իւրեանց ի

1 Ա չունի՝ զի ոչ աւարեսցուք. Բ, Գ գրեն՝ աւերեսցուք

2 Ա, Դ զայլոյ

3 Դ չունի՝ եւ. Ա չունի՝ ի՞նչ

4 Բ, Գ այնչափ. Դ չունի

5 Դ բազմութիւն

6 Ա բարիոք

7 Բ, Գ, Դ կամեցան

8 Դ ասեն

9 Բ, Գ ի քաջութեան. Դ քաջալերութեան

10 Ա, որսոցն

11 Ա, Դ եւ

12 Բ, Գ յերիւար

13 Դ բնութեանց

14 Բ, Գ, Դ սովորութեան մերոց

15 Ա թագաւորացն

16 Բ յղել

17 Դ անուամբ

18 Ա զմեզ

19 Դ գրէ հինէ

20 Դ սպառնեսցուք

21 Ա չունի՝ եւ

22 Բ, Գ լցուցուք

23 Բ, Գ, Դ ի դաշտին

24 Ա հիւսսական. Դ ի հիւսսական

25 Դ յաւելու՝ արթն

26 Ա Նմա. Բ որք Նմայն